ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2026 թվականի N 532 - Ն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1550-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. «Ուսուցման ազգային հիմնադրամ» հիմնադրամը (գրանցման համար՝ 222.160.55392) վերանվանել «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի «Ուսուցման ազգային հիմնադրամ հիմնադրելու, հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1550-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հիմնադրամի կանոնադրության փոփոխության պետական գրանցումը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ հիմնադրամի բնականոն գործունեության համար անհրաժեշտ գույք հատկացնելու վերաբերյալ:

4. Ներքոնշյալ պետական կառավարման համակարգի մարմիններին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում սույն որոշման հավելվածի 23-րդ կետին համապատասխան հիմնադրամի խորհրդի կազմում առաջարկել նախատեսված համապատասխան ներկայացուցիչներ՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն.

2) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.

3) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.

4) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն.

5) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն.

6) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

5. Սահմանել, որ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անվանական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը՝ սույն որոշման հավելվածով հաստատված կանոնադրության փոփոխության պետական գրանցման պահից հետո՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.04.2026

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ